

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԼԵՆԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԵՆԿԵՐՈՐԴ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлиς, Редакция «Мешакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(քաղկի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).
Յայտարարութիւնները ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, մարտի 2-ին, ցերեկվայ ժամի 12-ին

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՒՐԱԿԱՆՆԵՐ

մահվան քառասուններ օրը, վաղից մայր եկեղեցում տեղի կունենայ պատարագ եւ ապա հոգեհանգիստ, որին ներկայ լինելու համար հրաւիրվում են հանգուցեալի բարեկամներն ու ծանօթները:

ՄԵԼԵՆԿԵՐՈՐԴ

1903 թ.ին

12 ամսվանը	10 ռուբլի
11 »	»
10 »	»
9 »	»
8 »	»
7 »	»
6 »	»
Մնացածները ամսական	1 »

Եւրոպայում՝ 30 ֆր., Ամերիկայում՝ 6 դոլար,
Պարսկաստանում՝ 10 ռ.
Հասցէն. Тифлиς, Редакция «Мешакъ».

ԲՈՒՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կերական քրոջ.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր. ՆԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրակար.—
ՀԵՐԱԿԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ.—Գերմանացիները Թիւրքիայի
մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 2

Երէկ «Մշակ» բանասիրականում կարգացի
մի յօդուած, որ իմ մէջ զարթեցրեց վաղեմի
յիշողութիւններ:

Տարիներ առաջ, կարծես ութսունական թը-
ւականների վերջում, չուշեցի երկտասարդների
մի փոքրիկ խումբ վճռեց գրադարան-ընթեր-
ցարան բաց անել Այն ժամանակ դեռ գոյու-
թիւն ունէր բարեկիցատակ Կովկասեան հայոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԸ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ ՄԱՍԻՆ
(Նամակ Գերմանիայից)

Հայացիք, մարտի 2-ին

Շատ ու բազմակողմանի են այն գրքերը,
յօդուածներն ու տուրքի տէր պէս-պէս խորհր-
դածութիւնները, որոնք ուսումնասիրութեան
նիւթ են դարձել Թիւրքիան իր բովանդակ
կազմակերպութեամբ, մասնաւոր իր քաղա-
քական ու տնտեսական վիճակը «Հիւանդ
Մարդ» և մեծ մարդաբանից կնքված «Մեծ
Մարդ» անունով անունները կարծէք յատուկ
տեղիներ են դարձել Թիւրքիայի համար:
Սակայն ուսումնասիրութիւնների այդ խոշոր
քանակը չունի խորիմբ ու դատողութիւննե-
րի մի և նոյն ուրակը, թէն բոլորի մէջ ու-
րոշվող նիւթը մի և նոյն ուրոյն միութիւնն
է կազմում:

Հետազոտութեան ենթակայ այն օրիկները
Թիւրքիան, որի հանրածանօթ վիճակը ճշմար-
տութիւնը խոստովանելու անուրանալի փառ-
տեր է տալիս իւրաքանչիւր հետաքրքրուողի,
իր հարազատ պատկերով չէ մերկացվում շատ
ու շատ գրիչներից: Եւ սա շատ հասկանալի է:
Մի ֆոն Բիւլովեան ճետ, օրինակի համար,

Բարեգործական ընկերութիւնը, որի կանոնա-
գրութեան հիման վրա էլ թոյլտուութիւն էր
ստացվել:

Թոյլտուութիւն կար, բայց դժուարը դա չէր:
Դժուարը այն հանգամանքն էր, որ դեռ թղթի
վրա հազիւ հազ գոյութիւն ստացած այդ
կրթական հիմնարկութիւնը արդէն ունէր
թշնամիներ: Այն էլ ինչ տեսակ թշնամիներ:
Քաղաքի առաջատար անուանված դասից, այն
մարդկանցից, որոնք հասարակութեան մէջ
հրամանատարների դեր էին կատարում: Նը-
րանք դէմ էին գրադարանին, նրանք բոլորը
վին աւելորդ էին համարում այդ հիմնարկու-
թիւնը Շուշի քաղաքի համար:

Սկսվեց մի լամառ պայքար: Այսօր էլ յի-
շում եմ այն ձեռնարկի գուրտ երկնները,
երբ մենք, վարչութեան անդամներ, հաւաք-
ված օրիորդաց դպրոցի ուսուցչական սենեա-
կում, երկաթէ վառարանի շուրջը, երկար վի-
ճում էինք, երկար ապացոյցներ էինք բերում:
Շատ ու շատ ենք խօսակցել այսպէս: Մեր
հակառակորդները, որոնց մէջ կային նոյն իսկ
համալսարանական մարդիկ, ոչինչ չէին խնա-
յում մեզ լռեցնելու համար: Նրանք չէին քաշ-
վում նոյն իսկ անձնական վերաբերմունքից:
Մի երեկոյ նրանցից մէկը, չը կարողանա-
լով զսպել իր կրքերը, ասաց ինձ, թէ ես
մի քանի վարժապետների համար եմ ուզում
գրադարան բաց անել: Բայց մեր դիմագրու-
թեան առջև չը կարողացան կանգնել հակառա-
կորդները: Հարցը վճռվեց կարծեմ մի թէ եր-
կու ճանի առաւելութեամբ:

Բաց արինք այդ խորթ հիմնարկութիւնը
նեղձ ու կրակ մի բան էր նա: Երբ քանանա-
ն օրհնում էր չիստութիւնը և պատշաճից կախ-
վում էր անագին ցուցանակը, մեր դարակնե-
րում կային ընդամենը 30—35 գիրք և դրանց
մէջ փոքր էր չափ աչքի ընկնող գանձը: Տուր-
գենելի 12 հատորներն էին: Մեզ վրա ծիծա-
ղում էին: Մեր հակառակորդները գրադարանի

որ տուրքի տէր կոչվում էր քաղաքի ուղղում է
դէպի սուլթանների երկիրը, ամենակին դիտա-
ւորութիւն չունի իր տեսածն ու լսածը ամե-
նայն հարազատութեամբ հրապարակ հանելու
և այդպիսով լոյս տալու միջոցաւ իրական-
նութեան, այլ շահագրգիռ միտումներով աչ-
կատուում է եղածը չեղած հրատարակել և յար-
մարութիւն, հող պատրաստել վիճակ-հիւս-
վեան ծրագիրները իրականացնելու համար: Շատ
է խօսվել «Մշակ» էջերում ծախու և հանաձ
գրիչների (ի միջի այլոց յիշելու է պ. Ե. Թ. մա-
տենախօսութիւնները Գերմանիայից), փոքրագի
քաղաքականութեան զոր ճանապարհորդների
մասին, որոնցից գուցէ աւելի թան 80 տոկոսը
գերման ազգի ծագում ունենի ընտ. օսկաւ,
անգամ հազարաւորեալ են փայլում գերմանական
մամուլի մէջ այնպիսի գրիչներ, որոնք գուրտ
գալով գերմանական շովինիզմի նեղ օտա-
նաներից, հնչեցնում են արդարութեան ու
ճշմարտութեան վեճ ձայնը և հարուածում Եւ-
րոպայի դիպլոմատիական բարձրագոյնութիւնը:
Գրիչների այդ անկախ բանակին է պատ-
կանում վերջերս ընկերավարականների «Die
Neue Zeit» շարաթաթերթ օրգանում լոյս տե-
սած մի խիստ ուշագրաւ յօդուած՝ «Թիւրքիա-
յի սօցիալական-քաղաքական վիճակը» վերնա-
գրով (Միւրադ Պազուլի ստորագրութեամբ):
Մենք բոլորովին անկախ պատճառներից
գրգռված, հարաւորութիւն չունենք այդ յօ-
դուածը ամբողջապէս առաջ բերելու, ուստի և

գտնով չը մտան նոյն իսկ օրհնութեան օրը:
Բայց մենք չէինք վնասում: Արդէն մեծ
յաղթութիւն էր, որ մտաւոր սնունդ հայթայ-
թող հիմնարկութիւնը բացված էր Շուշու
տխրահոշակ Թօփխանայի վրա, ուր անգործ
մարդկանց անագին բազմութիւնը օրն ի օրն
խոնաված էջերի և այլ գրաստների հետ ժամա-
նակ էին սպանում սոսկալի կերպով: Այդտեղ
էին շուշեցու հրէշաւոր բաժնատէրները նիւթ
զտում, այդտեղ էր հասարակական դատաւ-
տան կազմվում, այդտեղ էր ընթացողութեան,
անբարոյականութեան այն օջախը, ուր սե-
րունդներ էին դաստիարակվում: Նոր էր բացվել
գրադարանը, մի օր պատշաճից ես տեսայ,
որ Թօփխանայի ցեխերում զբօսանք կատարող
մի հարուստ աղայ բարձրացրեց զուլը, տեսաւ
մեր ցուցանակը և քայլեր ուղղեց դէպի վեր:
Նայեց ընթերցարանի սենեակին, նայեց մեր
գրքերի ողորմելի պաշարին, հարցրեց թէ ին-
չու համար է այս բոլորը, գլխով հաւանու-
թեան նշան արաւ, բայց իսկայն աւելացրեց.
«Մերը սա է: Մտածվեց ցոյց էր տալիս Թօփ-
խանայ, ուր խմբված էին փայտափառների
և ալիւրափառների էջերն ու ջրիները, իսկ
հատ հատ մարդիկ կանգնած ժամերով նայում
էին ապուշ ու լուռ: Ընդ որ հարուստ աղան
գնաց անտեղ և րօպէ չանցած՝ նա էլ կանգ-
նած էր մենակ ու նայում էր:

Այս շուշեցին գտնէ բարեկորդներից էր, գտնէ
լուռ էր: Մինչդեռ քանիսներն էին, որոնք ա-
տամ կրճատեցնելով էին նայում իրանց ցեխոտ
ու հոտած Թօփխանայից մեր ցուցանակին: Երի-
տասարդներ, աշակերտներ էին մեր յաճախող-
ները: Եւ Թօփխանայ իր ինտելիգենտ և ոչ-ին-
տելիգենտ, երկուստեք և չըբողոքող խառն
ընտանիքներով վճռում էր: Թէ մենք անբարոյա-
կանացում ենք երեխաներին ու ջահիլներին:
Շուշու այդ մտաւոր սպանդանոց հրապարակով
անցնելիս շատ անգամ եմ ավանջվում լսել, թէ
գրադարանը դադանի նպատակների համար է
բացված, թէ մենք այնտեղ հաւաքվում ենք
ուրիշ տեսակ գործերի համար: Մի անգամ իմ
ծանօթ ուսուցչական հայ պրիւստաւը հարց-
նում էր ինձ. «Այն ինչք ես տեսում գրադա-
րանի մասին»:

Բայց այդ ատված ու անիծված հիմնարկու-
թիւնը չը մեռաւ: Ոչ միայն չը մեռաւ, այլ և
սկսեց մեծանալ, զարգանալ զարմանալի եռան-
դով: Երիտասարդների խումբը՝ այլատուում էր
անդադար: Ես այն ժամանակից գիտեմ, թէ ինչ
հրաշքներ կարող է գործել սուրբ ոգեւորու-

այստեղ կը բաւականանանք միայն նրա էական
մասերով:

Յարգելի հեղինակը ամենայն իրաւամբ նկա-
տում է, որ իսլամական ինքզօրէնք մար-
մինը 19-րդ դարի առաջին կիսում անհամեմատ
աւելի է ազդել եւրոպական քաղաքակրթու-
թիւնից, քան վերջին տասնեակ տարիների ըն-
թացքում: Սե Ժող, որ մինչև Բուխարեստի
խաղաղութիւնը (1812-թ.) ամբողջապէս հե-
թարկված էր Թիւրքիայի տրամադրութեան,
բացվում է բոլոր ազգերի նաւագնացութեան
առաջ: Եւրոպական պետութիւններից ապահով-
վում է Դունայ գետի և նրա ճեղքերի վրայով
հաղորդակցելու ազատութիւնը: Բացի դրանից,
որոշվում է օտարազգիների Թիւրքիայում կա-
լուած ձեռք բերելու արտօնութիւնը, փոքր
ի չափ կարգաւորվում է հարկատուութեան ե-
ղանակը, կանոնաւորվում է ծախսերի տարե-
կան քիւշէն, դրամի և նրա արժէքի սխառնը
և վերջապէս մշակվում է անհատատարի պաշ-
տօնականներին պատժելու օրէնսդրութիւնը:
Երեւոյթներ, որոնք արդիւնք են մինչև նոյն
դարի 50-կան, 60-կան թուականները: Եւ այդ
բոլորը չնորհիւ այն հանգամանքի, որ եւրո-
պական պետութիւնների որ և է մէկի կողմից
տեղի էր ունենում մասնակի առաջխաղացու-
թիւն և ինքնուրոյն քայլ նոյն իսկ այնպիսի խն-
դիւնների նկատմամբ, որոնք անմիջապէս չէին
յօշափում նրա սեփական քաղաքական շահերը:
Այդ մասնաւոր ինքնիշխանի շնորհիւ էր նաև

թիւնը: Երեւոյթն տարուց յետոյ գործը այն
գրութեան էր հասել, որ ոչ մի Թօփխանայ իր
բամբասանների թնդանօթներով չէր կարող
չնայել նրան:

Եւ ինչպէս շնատէր: Հիմնարկութիւնը ինքն
իր համար չըջան էր նուաճել: Ընթերցանու-
թեան դանթիւն միշտ լինէր: Եւ ճարին 5000
գրքեր էր տալիս գրադարանը՝ տներում կար-
դալու համար: Հարուստները, հասարակու-
թեան հրամանատարները առաջվայ պէս խոռո
էին գրադարանից: Յաճախողները վաճառական-
ներ, արհեստաւորներ, աշակերտներ էին:

Մենք նկատեցինք մի մեծ պակասութիւն.
մեր գրադարանի ղեկով մտնող կին չը կար:
Եւ մի տարի վճռեցինք դիմել Շուշու փափկա-
սուններին, առաջարկել նրանց մեր գրքերն ու
լրագիրները: Մենք պատրաստ էինք նոյն իսկ
հարեմական սկզբունքը յարգել, որպէս զի վըս-
տաւորութիւն տանք մեր կնանցն. ունէինք ա-
ռանձին սենեակ, յօժար էինք նրան ամբողջա-
պէս յատկացնել կանանց, միայն թէ գան, կար-
գան:

Գնդեցիկ թղթերի վրա հրաւերներ տպագրե-
ցինք, bon ton-ի բոլոր պահանջները կատարե-
լով՝ փոքրիկ, վարդագոյն ծրարներ մէջ դրինք
և ուղարկեցինք: Ժողովը գրադարանի դանթի-
նում չէինք նշանակել, գիտէինք, որ այդտեղ ոչ
ոք չի գայ, խնդրել էինք, որ տիկիներն ու
օրիորդները չնորս տանեն օրիորդաց դպրոցը:

Նշանակված ժամին սկսեցին հաւաքվել: Բայց
ես նկատեցի, որ հարեմա սենեակում հաւաք-
վել են և մի խումբ տղամարդիկ, որոնց մենք
չէինք հրաւիրել և չէինք էլ կարող հրաւիրել,
քանի որ նրանք գրադարանի հակառակորդ ին-
տելիգենտ, հեղինակաւոր պարոններն էին:
Մեր գեղեցիկ սեռի հիւրերից մի քանիսը մտնում
էին այդ սենեակը և ես լսեցի թէ ինչպէս
տղամարդկանցից մէկը յանդիմանում էր մի
տիկնոջ, որ մեր կանայք երեխաների, «ՄԱՅՆ-
ՊԱՅՄԱՆ»-ների հրաւերներն ընդունում են և
գալիս:

Բանը վատ էր: Բայց ես բաց արի ժողովը
և նոյն իսկ մի անարաման գեկուցում էլ տուի:
Բացատրեցի թէ որքան համակրելի հիմնար-
կութիւն է գրադարանը, թէ որքան ցանկալի է,
որ մեր տիկիներն ու օրիորդները նոյնպէս
օգտվին նրանից, իրանց աշակցութեամբ հոգի
տան նրան և այլն և այլն:

Ինձ լսում էին հարուստ, ճաշակաւոր գգեստ-
ների շարքեր: Եւ երբ վերջացրի, տիկեց մի
խեղդող, ծանր լուովիւն: Այժմ էլ դեռ չեմ

բալկանեան ազգութիւնների ազատութիւնը
իսկ այժմ—սկսած ուղիղ այն օրից, երբ մեծ
պետութիւններից իւրաքանչիւրի դիրքն ու յա-
րաւերութիւնը Թիւրքիայի նկատմամբ որոշ
ընաւորութիւն ստացան,—ինքնուրոյն քայլն
ու մասնակի ինքնիշխանութիւն տեղի է տուել
մեծ պետութիւնների այսպէս կոչված՝ հաւաքա-
կան միջամտութեան *) (Kollektivinter-
vention): Սակայն հաւաքական միջամտութիւն
այն որակի, որ պետութիւնների շահերը փո-
խադարձաբար յարգելով հանգրծել, անգոր է
մի և նոյն ժամանակ իրանց շահերը չը չօշա-
փող խնդիրների նկատմամբ վճռական քայլ
անելու, այլ միայն բաւականանում է երկար
ու ձիգ խոստովանելով: Զօրեղ պետութիւն-
ների շահագրգիռ «ինտերեսները» իրար դէմ
են ելնում: Թիւրքիայում այնպիսի մեծ մեկը
փով, որ հազիւ թէ նրանցից մէկն ու մեկը
առանձնապէս մի նշանաւոր խնդիր լուծելու
քաջութիւն ունենայ: Հէնց այդ է պատճառը,
որ այժմ աւելի ու աւելի կոտորվող ու թա-
ւանվող հայերը, սլաւոններն ու այլ ազգու-
թիւններ պաշտօնաւոր օնաւ Եւրոպայի կող-
մից դրեթէ ոչ մի ուշադրութեան չեն արժանա-
նում:

Բայց յարգելի հեղինակը եւրոպական շահերի

*) Յրանխական դիվանդան Մ. Կր Յօդէ ասել է մի
անգամ, «Հէնց միայն հաւաքական միջամտութիւն
խօսքերը բաւական են, որ Թիւրքիային հանգիստ
չնորհեն»:

մոռացել այն փոքրիկ զգացմունքը, եւ ուզում էր փախչել, փախչել ամօթից, փախչել այդ լուռութենից, այդ անշարժ, անխօս գլուխներէն, այդ պսակուն աղաւանդներից ու ոսկի-ներէն: Ընկերներս յատակին էին նայում: Յանկարծ, անակնկալ կերպով մեզ համար ստեղծվեց մի օտարոտի դրութիւն. կարծես մենք մեղադարարներ էինք այդ կանացի հասարակութեան առաջ, կարծես մեզ պիտի դատէին, դատաւարաէին այդքան անծանօթ կանայք: Խնջալէս եղաւ այդ բանը, երեւ տառնաց խօսքի էլ մենք իսկզպէս հասկացանք, որ մի յիմարութիւն ենք գործել:

Վերջապէս այդ անտանելի դրութիւնը անցաւ. խօսեց տիկիններից մէկը. Դա մի հին պաշտօնավոր չինսօվետիկ կին էր, քաղաքի առաջատարներից առաջատարը:

Ինչպէս ասեց այդ մեծայարգ տիկինը:

—Դուք հով ըբ, ինչպէս ըբ, հարցրեց նա: Պատասխան չեղաւ և նա պատասխանի չէր էլ պատահում, շարունակեց իր խօսքը. նա ասաց, որ թէ իրանց հարկաւոր լինեն գրքեր, իրանք, առանց մեր միջնորդութեան էլ, կարող են գտնել: Իսկ ինչ վերաբերում է ընթերցարան յաճախելուն, այդ ոչ ոք չի թող տայ իրան. եւ, ասաց տիկինը, երբեք չեմ համարձակուի, որ իմ աղջիկը գնայ, նստէ գրադարանում, թէկու՞ղ հենց առանձին սենեակում, թէ ինչ է դադէթ ու գիրք պիտի կարդայ: Նա, ի հարկէ, միայն իր կողմից չէր խօսում:

Եւ իրաւ. Հենց որ նա վերջացրեց իր խօսքը, բոլոր ժողովական կանայք վերկացան իրանց տեղերը: Այլ ևս խօսք չէր կարող լինել, ամեն ինչ վճռված, վերջացած էր: Մեզ մնում էր նայել ու տեսնել, ի՞նչ ինչպէս մեր փափկասունները խռովեցին իրար, կէս ժամ առաջ գերեզմանական լուռութեան մատնած դաշինքը լցրին կենդանի խօսք ու զրոյթով: Թափախանք: Վերջին մօղայով սանրած գլուխները խառն խաբէր կազմեցին, առօրեայ չարք ու բարքն մէջ բերին և նազ ու սազով դանդիկ դուրս թափվել սկսեցին: Մենք կուշ էինք եկել դանդիկ մի անկիւնում, վերաւորված էինք, իրար հետ անգամ չէինք կարողանում խօսել: Ոչ ոք մեզ բարեի անգամ չարժանացրեց...

Գրադարանը այնուհետև սկսեց բարգաւաճել առանց ջնջող սեռի մասնակցութեան: Մենք մոռացել էինք, որ Շուշու ջօնքի աջուձ էրին առաջադրութիւն անբարոյականացնող էինք մեր հաւաքած 5000 գրքերով: Եւ լաւ պատժեցինք: Նոյն ջօլ դասակարգը իր թանգարան կէսի բերանով յայտնում էր, որ աղջիկներին նա ոչ մի դէպքում չի թող տայ ենթակից գրքերի անբարոյականացնող ազդեցութեան: Բաւական է որքան տղաներն են անբարոյականանում:

Ինչ կարելի էր ասել Մոնում էր լուել, թոյլ տալ, որ շուշեցի մայրերը դատարարակն թէ իրանց և թէ իրանց աղջիկներին այնպէս, ինչպէս իրանց գործովից, գթաւատ սրտերն են կամենում:

Շուտով եւ հետագայ Շուշուց և երկար ժամանակ չէր դիմել, թէ ինչպէս է գնում կանացի սեռի դատարարակութիւնը: Երեք տարի առաջ մի քանի օրով գնացել էի Դարբասի:

Փոխարարած համերայնութիւնը միայն քաղաքական հօրիզոնում չէ գտնուում, այլ նաև տրեստական սահմանում, ուր ամեն բան զգալիութեան են եւրօպական կապիտալն ու կապիտալիստը: Մենք պետութիւնների ակնյայտի բարեկամութիւնը թիւրք կառավարութեան հետ զօրեղ կերպով աճում է թրքական պետական պարտքերի ղեկավարութեան տակաւ: 1881 թ. դեկտ. ամսին թիւրք կառավարութիւնը իր մի ղեկընդով հաստատում է «Administration de la Dette Publique Ottomane» (Օսմանական պետական պարտքերի վարչական մարմինը), բաղկացած մի թիւրք և հինգ օտար չափերի ներկայացուցիչներից (Interessenvertreter): Այդ հաստատութիւնը ունեցաւ եւրօպայի ֆինանսական այնպիսի վրա փառաւոր ազդեցութիւն, որովհետև Բ. Դուրը պետական պարտքերի ղեկավարութիւնը և այդ պարտքերը հողալու եկամտի աղբիւրները յանձնեց մի վարչական բոլորովին անկախ օրգանի և այդ միջոցով ապահովեց եւրօպական կապիտալիստներին: Անբնական եւրօպայի դիպլոմատներն ու կապիտալիստները հնարաւորութիւն ունեն հակառակ դէպքում իրանց բաց թողած խոշոր գումարների համար պաշտօնական թիւրքերին ձեռք առնել:

Ընթերցողին մի փոքրիկ գաղափար տալու համար, թէ պարտքերի ինչ ահագին թեւ է ծանրացած թիւրքերի շինքին, առաջ բերեմք

մայրաքաղաքը: Ինչ պատմեցին շատ ու շատ բան: Մի քանի օրիորդներ փորձում են յաճախել գրադարանը, բայց Թօփխանայի կեղտոտ լեզուները այնպէս են սկոռում նրանց հարածել, որ խեղճերը վերջ ի վերջոյ ստիպված են լինում փախչել: Դատարարակութիւնը, ուրեմն, շարունակվում էր նախկին մեթօդով: Բայց մի կարճէք, խնդրեմ, թէ շուշեցի տիկիններն ու օրիորդները ճշնաւորներ էին, իրանց տանը բանտարկված: Եթէ գրքի դատարարակութիւնը հալածվում էր ամբողջ քաղաքի բարձրագոյն դատարանը կազմող Թօփխանայի ձեռքով, դրա տեղ ծաղկում էր մի ուրիշ տեսակ դատարարակութիւն: Դա պիկնիկներ, տօնախմբութիւնների, ֆլիբոսի դատարարակութիւնն էր: Եւ ականջներս խցում էի, որ չը լսեմ պատմութիւններ: Բայց գրադարան հալածող քաղաքի բարձր ու վարժը անցեալ տարի դուրս եկաւ Մշակույթի տաղավաճ (Վերսալ կոչով խոստովանեց) մեծ յօդուածի մէջ, որ մեծ տպաւորութիւն գործեց շատ տեղերում:

Կարգավոր այդ յօդուածը և նրա առիթով մեր խմբագրութեան մէջ ստացված նամակները, եւ յիշում էի շուշեցի ջօլ տիկինը կիսայանդիմանական, կիսանգնական հարցը. «Դուք հով ըբ, դուք հնչացնո՞ւ ըբ»:

Դա շուշեցու բոլոր մոլութիւնների, բոլոր քաղաքական յատկութիւնների հանդիսարանի, մտքի, գրքերի անհաշտ թշնամի Թօփխանայի ձայնն էր: Մի ժամանակ նա անգոր էր, իսկ այսօր:

Այսօր նա կատարեալ յաղթանակ է տարել: Տղաւորագիւ էլ չեն գնում գրադարան: Եւ պիկնիկներն իրանց հալածող թշնամի Թօփխանայի ձայնը ունեցել է 26 անգամ: 26 հոգի մի հագին ժողովքով, ուր 30—35 հազար մարդ կայ: Մուտքը և բարձրակաւ խաւարի էլ ինչ ստեղծելի տրամադեցութիւն...

Գրադարանի վարչութիւնը յոյս չունի Շուշու մարդկանց վրա, նա դիմում է օտար քաղաքներում ապրող շուշեցիներին, նրանցից էլ երեք ընթերցող խմբերում: Միջին այժմ ժողովրդական աղէտների, սովի, սննդամթերքի, մարեխի ու մկների ժամանակ էին դիմում դրսի օգնութեան: Այժմ ախարհի չորս կողմերում ցրված շուշեցիները պիտի երեքական ընթերցող խմբերում, որպէս զի իրանց հայրենակիցները բարեկամեն գրադարան գնալ կարգալու: Բայց մեր երեք ընթերցողը կը համեն իրանց նպատակին:

Կարող ենք մենք, հետեւից նայողներս, բըժնել մեր հայրենակիցների հիւանդ միտքը, կուրծքները:

Հարուստ ու մեծ գրադարան են տուել, չեն գնում, չեն կարգում: Տարին երեք ընթերցող, այսինքն օրը 1 կօպէկից էլ պակաս տուող մարդ չը կայ: Բարեգործութիւն արէք դրանց, ասում են մեզ, որպէս զի Թափխանայի ձայնը լինի գրադարան յաճախելու: Շուտ լաւ: Բայց միթէ 1 կօպէկը վճար է. միթէ շուշեցին այն աստիճան աղքատ է, որ 1 կօպէկն էլ ծանրութիւն է նրա համար: Աղքատ է, այո, բայց հոգով աղքատ: Տուէք Թօփխանայում օրն ի բուն տպուկացող, փողով հոգով աղքատին ձրի բնա...

մի համարաւորութիւն, համաձայն թրքական պետական պարտքերի վարչութեան ցուցմունքների: Այդ խոշոր դոմարները բաժանվում են հետեւեալ երկրների վրա: Ցրանիս—85 միլիոն թրքական ֆունտ ստերլինգ (մօտ 315 միլիոն ընթերցող), Բելգիա—14 միլիոն ֆունտ ստերլինգ (126 միլի. ֆ.), Գերմանիա—9,5 միլի. ֆ. սա. (85,5 միլի. ֆ.), Անգլիա—8,5 միլի. ֆ. սա. (76,5 միլի. ֆ.), Թիւրքիա (բանկային հաստատութեան)—5 միլի. ֆ. սա. (45 միլի. ֆ.), Հոլանդիա—3,5 միլի. ֆ. սա. (31,5 միլի. ֆ.), Աւստրիա—1,5 միլի. ֆ. սա. (13,5 միլի. ֆ.), Իտալիա—1 միլի. ֆ. սա. (9 միլի. ֆ.): Ընդամենը կազմում է 78 միլի. ֆ. սա. (702 միլի. ֆ.) պարտք: Մի երկիր, ուր պաշտօնական, զինւորական շարունակ բողբոջում են իրանց անկանոն թօշակի համար, ուր բոլորովին խաւար մտածան քաղաքի հարկերն և բռնադատելի կողմորտի զարհուրելի ծանրութեան տակ թիւնը, դեռ ենթակայ է օտար կապիտալի այնչորինակ խոշոր պարտքերին:

Սակայն չափազանցութեան աւելի փառաւոր ներքի համար թիւրքերի այն սահմանում, ուր կազմակերպված օտարազգի ակցիօներական ընկերութիւնների (ընդամենը 580 միլիոն թրքական ֆունտ ստերլինգ) խոշոր կապիտալը թիւրք կառավարութեանը:

Թեքցանութիւն, նա վաղը ձեռնարկ կը սկսէ վրէժ, իսկ վերջինս այդ դօկումէնտը ներկաւ պրէմիա պահանջել իր այն շնորհի համար, որ յարցեց նահանգապետին:

30—35 հազար ժողովուրդը չէ կարողանում մի գրադարանի տարեկան ծախսը ապահովել: Կօպէկ է պահանջվում նրանից. և չը կայ, չեն տալիս: Երեւոյում էք աւելի մեծ քաղաքներում:

Համատարած այդ մեղութիւնը չէ կարող վերանայ դրսից մտրած կօպէկներով: Զրի բնութեքցանութիւնը շատ լաւ բան է, բայց ձրիաւ կերպով են սովորեցնում...

Ոչ, պարտքեր, սովորեցրէք, որ մարդիկ այդ աստիճանի ձրիակեր չը լինեն: Սովորեցրէք գոնէ կօպէկ տալ ընթերցանութեան համար: Սա էլ մեծ սկզբունք է, սա էլ չը պիտի մոռացվի մանաւանդ այնտեղ, ուր աղքատը, գիւղացին, բանուորը չէ կանգնած ձրի մաց, այլ մեծ մասամբ ունեւորը: Ամօթ է, որ մէկը աւելորդ հարկերն ծախսէ իր փորի ու հագուստի համար և մտաւոր կերակուրը ստանայ ձրի, իբրեւ ողորմութիւն...

Ողորմութիւնը պէտք է տալ... Բայց ունի Լ.

Յ. Գ. Իմ անցեալ Վերականգնող գրքից աւելի շնորհակալ եմ դրսից տեսնող պ. Բալաշեանի մի նամակ տպագրեց «Մշակ» № 43-ի մէջ: Թիւրքիայի ընթերցողները պարզելու համար երկու խօսք կասեմ այն նպատակների համար, որ տուել է դրսից հանգուցեալ Տէր-Դաւիթեանի ընտանիքին: Տէր-Դաւիթեան վախճանվել է 1901 թ. Նոյեմբերին: Ուրեմն հիշեցնում եմ ինքն իր և Նոյեմբերին տուած 50-ական ընթերցողները նրա հիւանդ ժամանակն են ծախսված: Թաղման համար տուած 100 ընթերցող մի նշանակութիւն չունեն որբերի համար, քանի որ այդ գումարը տարել են ուրիշ մարդիկ, թողնողները: 208 ընթերցող օժանդակութիւնը եթէ չեն սխալվում, Տէր-Դաւիթեանի ընտանիքը նրա մահից սկսած մինչև ուսումնական տարվայ վերջը, թիւն այնպէս է, որ երեք տարեկան օժանդակութիւն անտանել այդ գումարը չէ կարելի, քանի որ բոլոր դրսիցներում կայ այդ կարգը, որ հիւանդ կամ վախճանված ուսուցիչ ընտանիք տրվում է մինչև տարվայ վերջը: Մոնում է երկու ամիս արանից առաջ տուած 50 ընթերցող ընթերցողների պահպանութեան համար այն գումարը, ինչպէս տեսնում էք, շատ չէ: Եւ վերջապէս ինչո՞ւ խօսել անցեալի մասին: Մենք ապրում էինք ոչ միայն երեւ և անցեալ օրը, այլ և այսօր և վաղը պիտի ապրենք: Այսպէս են և հանգուցեալի որբերը: Իրողութիւնն այն է, որ նրանք այսօր ոչինչ չունեն ապրելու համար: Խնջալէս մոռանալ այս...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Թիւրքիայի քաղաքային դոմայի կողմից քաղաքային ընտրված իշխան Ն. Վ. Երկայ-նաբազուկ-Արղուսեան փետրվարի 28-ին ներկայացրեց իր ծառայութեան ցուցակը Թիւրքիայի քաղաքային պաշտօնակատար Շեստակո-

թիւնից ապահովվում է մեծամեծ տոկոսներով: Այսպէս ահա, երբ եւրօպական դիպլոմատն ու կապիտալիստը Թիւրքիայում գործ դրած իրանց քաղաքական ու ֆինանսական ջանքերի համար փառաւոր կերպով վարձատրվում են, կամ վարձատրվում գեղեցիկ, ապահով յոյսեր ունեն, ինչո՞ւ ուրեմն օսմանեան կառավարութեան թշնամի հանդիսանան, ընդդէմ գնան նրա քաղաքական յանքին որ և է միջանկեալ խնդրի համար: Ինչո՞ւ Մարգարայանը սարսափէ, դողալ իր արեւմտահայ կոտորածների համար, երբ նա մի անգամ ընդ միշտ լաւ է ըմբռնել եւրօպական պետութիւնների հաւաքական միջամտութեան տեսական ընթացքը, անվնաս սաստիկութիւնը: Կարիք կայ արեւօք առանձնապէս յիշելու, որ թիւրք կառավարութիւնը մի քանի կէտերում նոյն իսկ շատ ընդունակ է եւրօպականաւորել: Այսինքն նա շատ լաւ ճանաչում է, քան գուցէ որ և է մէկը, արդէ կաշառատութեան բոլոր միջոցները (Korruptionsmittel), որպէս զի գրանով թէ եւրօպական մամուլի *) և թէ ամենաաղքեցիկի դիպլոմատների բարեկամութիւնը վաստակել կարողանայ:

*) Թեւեալ այժմ մտազցած լինեն այն կարիկատարները, որ արանից մի քանի տարի առաջ Պարիզի «Petit Journal» թերթում լոյս էր տեսնում, որ իբր թէ Թիւրքերն են հայերից կոտորվում, զգալիաւ Այդ իրողութեան կեղծիքը անշուշտ գիտէր մամուլի ղեկավարը:

Կառավարական շրջաններում հարց է բարձրացրած նշանաւոր չափով աւելացնելու արտասահմանեան հանգային ջրերի վրա դրված այժմեան մաքուր որպէս զի ուստական հանգային ջրերը, չը հանդիպելով մրցութեան նրանց կողմից, աւելի մեծ քանակութեամբ տարածվեն Ռուսաստանի սահմաններում:

Ուրախ, փետրվարի 28-ին, տեղի ունեցաւ Թիւրքիայի քաղաքային վարչութեան և ուսումնարանական կոմիտէի անդամների միացեալ նիստը: Որի ժամանակ քննվեց կառավարիչ սենատին բողբոջ ներկայացնելու հարցը Թիւրքիայի նահանգական ատենանի օրոշման դէմ, որով պատգամվում է չը գործադրել ուսումնարանական կոմիտէի համար Թիւրքիայի դոմայի միակամ և հաստատած հրահանգը: Գնահելով այս հարցը՝ միացեալ ժողովը որոշեց մի առանձին մասնաժողով էլ կազմել, նախագահութեամբ Յ. Ս. Ալիխանեանի, որի վրա և պարտաւորութիւն դնել մշակելու յիշված բողբոջի շարժառիթները:

Մեզ խնդրում են հաղորդել, որ Թիւրքիայի Հակա-սլովոնական ընկերութեան Հաւաքարի բաժանմունքի թատրոնում, հայ սիրողների խումբը այսօր, կիրակի, մարտի 2-ին, կը տա իր 12-րդ հանրամատչելի ներկայացումը: Կը ներկայացվի «Ոճրագործի ընտանիքը» դրամա:

Անցած թատրոնական սեզօնի ընթացքում վրաց դրամատիկական խումբը տուել է ընդամենը 38 ներկայացում, որոնց ժամանակ խաղացվել են 45 պիէսներ: Թ-ը ինքնուրոյն, 15-ը փոխադրված, իսկ 21-ը թարգմանական: Ինքնուրոյն մուտք է ունեցել ընդամենը 10,750 ընթերցող, իսկ ծախս—12,000 ընթերցող աւելի, այնպէս որ սեզօնը վերջացել է 1500 ընթերցող աւելի դէֆիցիտով: Ներկայացումներն այցելել են ընդամենը 17,000 հոգի, որոնցից 250 հոգի վերցրել են 1 ընթերցող աւելի արժեքող տոմսակներ, 7,000 հոգի մի ընթերցող պակաս (պարտէրում), իսկ 7,500 հոգի վերցրել են գալէթայի տոմսակներ:

Նորերում հրատարակվեց այն ուստական ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպատակն է ուսումնասիրել Միջին և Արեւելեան Ասիան պատմական, հնագիտական, լեզուաբանական և ազգագրական տեսակետներից:

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագրիները, ժողովրդական լուսատուութեան միջնորդութիւնը մշակել է մի ծրագիր, որով մտադրութիւն ունի բանալ առանձին ուսումնարաններ ապուշ, էդիլեպոլի և յիւսամուց երեխաների համար: Յիշված նախագիծը հաստատվելուց յետոյ՝ միջնորդութիւնը, առանց յետաձգութեան, ձեռնամուխ կը լինի բանալու յիշված ուսումնարանները:

Ահա այսպիսի պայմաններում անկարող է անշուշտ եւրօպական քաղաքակրթութիւնը Թիւրքիայում որ և է առաջադիմական քաղաքական իսկ Թիւրքիայի նման կառավարութեանը թողնել ինքը իր ինստիտուցիան և ուրիշ օգնական, ապահով յոյսեր խորտակելու իր մէջ առաջացած նորածնի կենսաբանական ոյժերը: Տիրապետող դատարարը, օսմանեան բիւրօ կրատիան և կոտորածներում կապիտալիզմի արդէ առաջնորդ մութեամբ: Ձը նայելով այդ դատարարի մեծամեծ արտօնութիւններին, այնու ամենայնիւ նա անընդունակ է առետրել և առնաւորական տեսական սահմանում որ և է դրական դիմադրում, այնպէս որ ամբողջ Թիւրքիայի աղքատները, անտեսական զարկերակը գտնվում է այլ տարբեր ձեռքում, ինչպէս են յօշնեքը, հայերը, և պարսիկները, և լաւ օրինակը: Կարիք կայ բացատրելու, որ երկրի մէջ, ժողովրդական կենսական որ և է քաղաքակրթական նորութիւն, թող լինի դա եւրօպական իսկական կուլտուրայի մի փոքրիկ ստուերը, կատարվում է ինչեալ տարբեր միջոցով, որով ընդունակ են անշուշտ աւելին անելու, գործելու, սակայն հնարաւորութիւն չունեն, ենթալ կայ լինելով մի այնպիսի բռնապետի անմիջական տիրապետութեան, որը իսլամական յարաբերութեամբ թշնամի է առաջադէմ կենսական (Կը շարունակվի)

ԿԱՐՄԻՃ մեղ գրում են. «Բաղադրի գրքը ծովի մակերևութից բաւական բարձր լինելու պատճառով ընդհանրապէս այստեղ ողջ ցուրտ է. չը տեսնուած մի ձմեռ անցկացրինք այստեղը էլ չը կան ըստ Բէմբուրի միջին 35°-ի հասնող սառնամանիքներ. վերջերս նոյն իսկ ձմեռը սկսեց հալվել, որով քաղաքի փողոցներէն շատերը անանցանելի դարձան Բայց երէկ, փետրվարի 27-ին, դարձեալ ձիւն եկաւ, թէն խիստ ցրտութիւն չը կայ այլ եւս»:

ԿՐԱՄՈՎՈՎՍԿԻՑ մեղ գրում են. «Փետրվարի 23-ին Բաղուրի դերասանական խմբի անդամներ մի մասը, ղեկավարութեամբ պ. Ստեփանեանցի և մասնակցութեամբ տեղական սերողների, Կրասնովոդսկի քաղաքային ժողովարանի դահլիճում խաղաց «Ալան-Բալան» պիէսան. ներկայացումը անցաւ բաւական աւելի մասնաւոր իրանց կենդանի խաղով աչքի էին ընկնում պ. պ. Ստեփանեանց և Ջարի-ֆեանց, վատ չէր և սերող պ. Գեղամա Դանիւ-ճը ծայրէ ի ծայր լինէր ի հասարակութեամբ: Կային և օտարազգիներ»:

ՂԱԶՐԼ-ԱՐԿԱՍԻՑ մեղ գրում են. «Փետրվարի 23-ին, ցերեկվայ ժամի 12-ին մօտ Ղազար-Արկա-տի բնակիչ ծերունի Կիրիլեանով կացնի մի հասարակական կրակատար է անում իր հարազատ քրոջ աղջկան—14 տարեկան Լիզա Տեպլակովա-ին: Աղջիկն այդ միջոցին փառարանն է վառելիս լինում: Անմեղ զոհը տեղի ու տեղի է մնում երեսի վրա փռված: Ոճրագործ ծերունին ծածկում է սպանվածին վերմակով ու դուրս գալիս սենեակից, կացինը չարտում կտորը, լուսացում ու գնում Կրասնովոդսկի Զեմե-ւեան են պատմում իբր սպանութեան շարժա-ոնքը—ծերունի Կիրիլեանովն իրան արքայա-թեան տալով վառում է իր ունեցածը: Տները ծախվելիս իր փեսան է գնում իսկ այդ բանը դուր չէ գալիս ծերունուն և նա այդ օրվանից ռիսակալութեան է լինում իր քրոջ ու փեսայի վրա, թէն նրանց տանն էլ ապրում էր: Սկզբնական քննութեան ժամանակ Կիրիլեանովը հետեւան է պատասխանում—«Բերջն էի ու-զում սպանել, բայց իմանի աղջկանն ընկաւ, ես մեղաւոր եմ: Սպանութեան օրը աղջկայ ծնողներն Ասիարազ էին գնացած: Լիզան էլ փոքր եղբորը ուսումնարան է ուղարկում իր դասընկերուհիներին հետ, իսկ ինքը չէ գնում և մնում է տանը կերակուր պատրաստելու: Մերունին յարմար ժամանակ է տեսնում և կա-տարում նախամտածած ոճիրը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սօֆիայի լրագիրների խօսքով, մակեդո-նական բարձրագոյն կոմիտէն նախկին նա-խագահ Բորիս Մարաֆով, որը ներկայումս գտն-վում է Մակեդոնիայում, ուղարկեց մի քանի տո-նային խաղաղութիւն մի նամակ, որի մէջ մաս-նաւորապէս նկատագրում է բոլորական ժողովուրդի անտանելի դրութիւնը Մակեդոնիայում և կոչ է անում բոլորական կառավարութեան հայ-րենասիրական և մարդասիրական զգացումներ-նային, համոզելով նրան այնպէս և եթ, անյայտ աւանդաբան տալ համակրութեամբ մակեդոնա-կան զործիներին, որովհետև յետոյ արդէն ու-կը լինի:

—«Новый Дневник» լրագրի մակեդոնա-կան թղթակցի հաղորդում է Փորնի Զոմայից, որ այնտեղ, փետրվարի սկիզբներին, կոտա-վարչական մունիսիպալ պատում էր քաղաքային փողոցները և հրապարակները և բարձր, դի-մալով յայտարարում էր. «Զեմբի կանխած պահեստի գնաւորները քաղաք գալու տարիքով չորեքշաբթի, զայնպիսով բարեհաճեց հրա-մայել, որպէս զի այդ օրը ոչ ոք չը համար-ձակելի դուրս գալ տունից: Հաղորդելով այդ թղթակցի աւելացումն է, «Այդ փաստը ամե-նայաւ ապացոյց է այն բանի, որ պայտուս-կան թիւրքիան հանդիսաւոր կերպով, իր մու-նիսիպալի միջոցով, խոստովանում է, որ թիւրքաց զօրքերի մի որ և է քաղաք գալու հաւասարագոր է հոնների արշաւանքին: Ար-գելելով քաղաքացիներին տներին դուրս գալ, թիւրքիան խոստովանում է, որ ինքն ոյժ չունի զսպելու իր զօրքը: Եթէ այդ բանը տեղի է ունենում թիւրքաց կայսրութեան թիւ չափ խոշոր կենտրոններում, ուրեմն ինչիւր են ա-նում այդ վայրերի հրոսակները մեծ ճանա-պարհների վրա և գիւղերում, որոնց միջով նրանք անցնում են»:

—«Daily Express» լրագրի առելով, Լոնդո-նում համարեա կազմակերպված է մակեդոնա-կան շնորհի կազմակերպութեան զինուոր-ների մէկի պիւսթեթօր Միխայիլովիչի Գան-բուկ կազմակերպութեան մի զօրաւոր, որը իսկոյն պէտք է օգնութեան գնալ մակեդոնացիներին, ինչն որ նրանք ընդհանուր ապստամբութեան

յայտարարեն «Daily Express» հաւատարմում է, թէ Միխայիլովիչի յատկապէս դրա համար գնացել է Լոնդոն և կարողացել է ժողովել մօտ 100 մարդ: Լոնդոնի մակեդոնական զործակա-միջոցով Սօֆիայից ընդհակառակը հաղորդում են, թէ Միխայիլովիչն ոչինչ չէ անում անհի-րայց Լոնդոնում կարծում են, որ դա լոկ մի մանկօր է, որով մակեդոնական զործիները կամենում են թաղանջի ապստամբութեան սկիզբը, որ պէտք է տեղի ունենայ ապրիլին:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Գիտնական ընկերութեան նիստից յետոյ ըն-կերներն առաջարկեցին միասին ընթերցել և օր-վայ չարիքների մասին խօսակցել: Վերջերս հիւրանոցի սենեակներից մէկը, պատուիրեցինք ընթերցել և սկսեցինք մեր զը-րոյցը: Սօսեցինք մեր ընթերցելի հարցերի մասին, լինեցինք Մակեդոնիայի ղեֆօրմների մասին, հետաքրքրվեցինք թիւրքիայի հայկական նա-հանքների գրութեան խնդրով, յայտնեցինք մի շարք խորհրդածութիւններ նախնական կո-միտէների գործունեութեան մասին և կանգ առինք այն վիճարկութեան վրա, որ սկսված է «Մշակ» և «Ваканск, Извѣстия» լրագիրների մէջ:

—Բաղուրի լրագրի մէջ տպված յօդուածը մի անհնարելի թիւրքիւնացութիւն է, առաջ մեր խօ-սակցիցներից մէկը. դա այն սխալներից մէկն է, որ ճակատագրական կերպով ապրում են փորձաքար դառնալու նշանց թող տուող լրա-գիրներին համար:

—Ինչու ես այդպէս կարծում եմ, հարցրեց միւս խօսակցիցը:

—Անա ինչու, բացատրեց առաջինը. Դուք գիտէք այն ժողովրդական առածը, որ ասում է թէ՛ «Եղու ցոյց տուր ինձ քո ընկերին և թշնամուն և ես քեզ կաշտեմ թէ ինչ մարդ ես»: «Ваканск, Извѣстия»-ն մի նոր լրագիր է: Միւր նրան զեռն ճանաչում, մենք նրան զեռն չենք փորձել կենալի պայքարում: Ուր է նրա ընկերը և ուր թշնամին: Սպասում էինք տեսնելու: Եւ ահա ինչ ենք տեսնում: Այդ լրագիրը, որ իրան զգոյշ էր պահում և չէր վրա տանում իր ընկերին և թշնամուն անուանել պարզ կերպով, յանկարծ համարձակութիւն է ստանում խօսելու և խօսում է «Մշակ» դէմ: Այդքան երկար սպասելուց յետոյ—«ախ ինչով լուծվեց Զարաթուստի պապանձումը: Թիւրքիա-ցիներն է դա, թէ սխալ յամենայն դէպս բը-նորոյ է:

—Սակայն նա գովել է Արծրունուն, նկա-տեց երկրորդ խօսակցիցը:

—Այո, գովել է, բայց դա ուսանելի չէ: Նա գովում է մի անձնաւորութիւն, որ այս օրակիս չէ կարող խօսել: Նոյն իսկ Արծրունուն ուս-տեալ հակառակորդները այժմ նրա ստուերին են դիմում և նրա անունով այլատուում են վայր զցել այն մարդկանց, որոնք շարունա-նակում են Արծրունու գործը: Այժմ մեր խա-ւարամիտների օրգանները մի գլուխ գովում են Նազարեանցին, Նալբանդեանցին և նրանց ժամանակակիցներին Նախկին զործողների ա-նունները հարկաւոր են ժողովրդականութեան համար և մի և նոյն ժամանակ նրանք կենա-լի են, որ խաւարամիտների գործունեութեան ոգու դէմ որ և է բողոք յայտնեցին»:

Մեր խօսակցիցներից մէկը ուշք դարձրեց Բաղուրի լրագրի յօդուածի մի կէտի վրա, այն է. թէ մի ժամանակ «Մշակ» հետաքրքրու-թիւն էր չարթել գաւառական քաղաքներից մէկում թեմական դպրոցի շուրջը կատարվող գործերի առիթով:

—Այդ քաղաքը Շուշին է, բացատրեց նա: Բայց միթէ այնուհետեւ տեղի չունեցան բազ-մաթիւ դէպքեր, որտեղ կրկնվեց մեծ ու փոքր չափով նոյնը, ինչ որ մի ժամանակ տեղի էր ունեցել Շուշիում:

—Այո, միջամտեցի ես, միայն գործին ան-ապեղանք լինելը կարող էր ծնել այդպիսի ան-հեթեթի խօսքեր: Յիշեցէ՛ք Նրանի թեմական դպրոցի շուրջը կատարված անցեալ տարվայ դէպքերը, որոնք մոռացնել տուին Շուշու դե-ցաղներգութիւնները, որտեղ անսովորութիւնը այնտեղ հասաւ, որ «Մշակ» հակառակորդները բերեղացիներ իրանց ուղեղը մի խալտառակ պատկերի մէջ, որով նրանք առ միշտ իրանց ջնջեցին կարգին մարդկանց չըլանից:

—Ելել է:

—Իսկ կաղզուանի տաճարի շինութեան վե-րաբերութեամբ ծագած այն խնձով գործը, որի պատճառով այնտեղ ուղարկվեցին քննիչ-ներ, Սուրբաւ արքեպիսկոպոսը, յետոյ հարկ համարեց այնտեղ գնալ ինքը Վհափառ Կա-թողիկոսը և ծագեց դատաստանական գործ «Մշակ» լրագրում տպված յօդուածների առի-թով:

—Այո, Կաղզուանի խլրտումը Շուշուց պա-կաս չէր:

—Իսկ Ախալցխայում ծագած անվերջ յուզ-մունքները իրանց եկեղեցական եկամուտների և երէցիկների վերաբերութեամբ, որոնք միայն արանից մի քանի ամիս առաջ փոքր ինչ հան-դարտեցին: Իսկ Նախիջվանի գաւառի անցեալ տարվայ գործերը, իսկ Ախալքալաքի գաւա-ռում ծագած թիւրքիւնացութիւնները, իսկ Գո-րիում տեղի ունեցած այն պանամաները, որոնք

ամիսներ և տարիներ շարունակվելով չեն վեր-ջացել նոյն իսկ այժմ և որտեղ «Մշակ» լրա-գիրը այնքան նպաստել է արդարութեան պաշտպանութեան: Իսկ Ղանդու Ալիշանի հա-մար հոգեհանգիստներ կատարելու խնդիրը, որ նորից արթնացրեց միջադարձան անհա-մարող ողու կուսակիցներին:

—Դա ընտրոյ մի պայքար էր, նկատեց հա-րեանս, որ կը մնայ իրեն արտա մեր հոգևոր գործողների մի ստուար մասի վրա և իբրեւ մի նոր յաղթանակ «Մշակ» քաղաքականների համար:

—Կարելի է դու երկար շարունակել, նկա-տեցի ես, բայց այստեղ կարեւոր է ոչ նամա-զումարը, այլ նրա ընդհանուր բնատրութիւնը: Այսօր Շուշիում, իսկ վաղը Կաղզուանում, Ա-խալցխայում, Գորիում և ուրիշ տեղերում, ուր կենալը երևան է հանել չարիքներ, որոնք դէմ պէտք է կուէլ: Իսկ ինչ կուէլ այն հանդա-մանքին, որ իրանց յօդուածների պատճառով վնասվեցին մեր թղթակիցները և ստիպված ե-զան հետաւալ իրանց բնակութեան տեղերից: Հեռացան Սիւնիքի, Ալտարակի մեր թղթա-կիցները, սպանալիքներ են թարկվեցին Ա-խալքալաքի, Իզդիրի, Ելմիսանի և չառ ուրիշ տեղերի մեր թղթակիցները:

—Ես հասկանում եմ մասամբ բազուցի պա-րտնդներին, միջամտեց մեր խօսակցիցներից մէկը, որ օրում է գաւառական կենալը զբաղվել:

—Ինչ էլ ուղում սակ, հարցրեց մենք:

—Անա ինչ, յայտնեց նա: Բազուցի երիտա-ւարդին միթէ կարող է հետաքրքրել այն, որ Արարատում, կամ Շիրակում կամ Զաւարթում անգրիքիութիւն է, որ գիւղացին, ապրելով իր գեղատար խրճիթներում, գուրկ է լայից, մա-քուր օդից և գնդում է մշտական սպանա-լիքի մէջ մի օր թաղվելու իր տան փառակ-ների տակ, ինչպէս այդ տեղի ունեցաւ Ախալ-քալաքի երկրաշարժի ժամանակ: Ի հարկէ տխուր, ճանճարեղ և տաղաղակ է նրա համար կարգաւ այդ բոլորը:

—Այդ ճիշդ է, բացատրեցի ես, մենք չառ գիւղապետ ենք դէպի մեր գաւառական կենալը և գիւղացին, բայց դա արժանաւորութիւն է և «Մշակ» լրագրի արժանաւորութիւնը յատկանշեցինք մէկը: Ամեն անգամ, երբ անհրաժեշտութիւն է զգացվել տեղեկութիւններ ժողովելու երկրի բերել մասին, ամենանաւատ նիւթը վերցվել է մեր լրագրից, որովհետեւ մեր կապը գաւառի հետ մեծ է և մենք տեղեկութիւններ ունենք այն-պիսի անխնայներից, որոնք անմասնելի են միւս լրագիրների համար:

—Կարծեմ, հարցրեց Կարեանս, «Մշակ» ա-մենից վաղ խօսեց մեր երկրի գիւղատնտեսա-կան կարիքների մասին, երբ յարուցվեց տե-ղական կոմիտէ կազմելու հարցը:

—Այո, այդպէս է, «Մշակ» տաղաքից պա-րագծունեների ծրագրից լույսին 19-ին, և հրաւիրեց իր թղթակիցներին նպաստելու այդ ծրագրի հարցերի ձեւակութեան: Նոյն իսկ երե-ւացին թղթակիցներին կողմից արձագանքներ: Իսկ միւս լրագիրները նոյն գործով զբաղվեցին աւելի ուշ:

Միտեւեան մենք խօսեցինք քաղաքականների վերաբերութեամբ կատարած գործերի մասին, որոնք մեծ հետաքրքրութիւն չարթեցին մեր հասարակութեան շուրջ խաւարում:

—Դա այն գործերից մէկն էր, որ ինչեցում էր «Մշակ» գործունեութեան փայլուն էջերից մէկը:

Հանգամանքները սակայն չուստով հանեցին այդ հարցը սապարէզից:

—Օգնութեան գործը միշտ զբաղեցրել է մեզ, նկատեցի ես, և մենք մշտապէս մի որ և է նպատակ գործով ենք զբաղվում: Յիշեմ այս վերջին տարիների ժողովրդարարութիւնները, Ախալքալաքի և Շամախու երկրաշարժներից վնասվածներին օգնելու, Կարա-Մուրցայի աշ-խատեթիւնները հրատարակելու և որեւ-րին ապահովելու, որեւրին չբաւարարելու, մա-հարձանքի գնալու (Արծրունու, Պատկա-նեանի, Նալբանդեանի), հանրամատչելի գըր-քեր հրատարակելու, Բաֆֆիի մօր, ու-սուցիչ Տէր-Կալեանի որբերի, Շահա-մեանի և ուրիշների համար ժողովել ենք և ժողովում ենք գումարներ, որոնք էական դեր են կատարել և պէտք է կատարեն:

Իսկական երկար խօսակցութեան ժամանակ գործի մասին, որ ներկայումս առանձին հե-տաքրքրութիւն ունի մեր հասարակութեան չըլաններում և որին «Մշակ» նուիրեց վերջին տարիներում մի շարք յօդուածներ:

—Մենք այլատուում ենք, ասացի ես, կենալի լուսաւոյն հոսանքների և լուսաւոր շարքի արտա-յայտող լինել և առաջ եկող պահանջներին բա-ւարարութիւն տալ: Անա մեր գաւառի մի քանի կէտերում սկսում են երկալ ընկերակցութիւն-ներ, օրինակ Ալտարակում, Վաղարշապատում, Իզդիրում, մենք իսկոյն աշխուրջ կերպով նը-րանց հետում ենք, թափալակում ենք և աշ-խատում ենք մեր խորհուրդներով օգնուէտ լինել նրանց, ինչով կարող ենք: Մի ուրիշ ան-գամ նուիրում ենք մի շարք յօդուածներ այն-պիսի հարցերի, ինչպէս է անսովորական ժան-տախտ պատուաւանքը, որ գիւղական մեծա-մասնութեան համար մեծ նշանակութիւն ունի:

Իսկ բազուցի պարտնդները ասում են՝ այդ ձեւը ընկերակցութիւններին, ժամանակակիցներից, գաղ-թականներից, գիւղական կարիքներից ճանա-րացանք, «СЕМЬЮ» ինչպիսին է:

Սոսակցիցները մտաբերեցին Պարսկաստանի կրթութեան և ուրիշ գործերի վերաբերեալ յօ-դուածները, հայաց գրիքի գիւտի 1500-ամեա-կի առիթով բացված վէճը, մեր գործարանա-

կան կենալի վերաբերեալ թղթակցութիւնները ու խորհրդածութիւնները...

—Այդ ամենը մի բան է ցոյց տալիս, ասաց առաջին խօսակցիցը, որ Բաղուրի պարտնդները կորցրել են հետաքրքրութիւն դէպի այն ամե-նը, ինչ որ թանգ և հետաքրքրական է հայ ժողովրդի համար: Կապը խզվել է: Ժողովրդի հարցերը և խնդիրները ճանճարի են նաւ-թային աշխարհի մոլորեանքների համար:

—Մեր գաւառից մենք ողբորութիւն ենք ստանում, աւելացրի ես, իսկ «մեր ընտրա-րից» միայն ստանութիւն և հարցական նշա-ններ: Ինչ կարող ենք անել մեր ճանճարացած, տխրող, ամեն մի կենսական հետաքրքրութիւն կորցրած ընտրաբանների հետ:

Մենք կը շարունակենք մերը:

Վրճին

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆՑ

28 փետրվարի

ՌԻԻՍԿ. Փետրվարի 27-ին, կէս օրից յետոյ 8 ժամին, այստեղ զգացվում էր անընդհատ բաւական զօրեղ աղբաւման երկրաշարժ ընդ-հարուսնելով, որ շարունակվեց մէկ և կէս րո-պէ, արեւելքից դէպի հարաւ ուղղութեամբ:

Կ. ՊՈԼԻՍ. Գերմանական կառավարութիւնը ըստ երևոյթին չը կատարեց Բ. Դրան ցանկու-թիւնը, որ վերաբերում էր գերմանական օֆի-ցներին ծառայութեան հրաւիրելու: Մակեդո-նական ոստիկանութեան մէջ:

ԼՈՆԴՈՆ. Համայնքների ժողովը Բալթիկ ա-պացուցանում է, որ երեք զօրաւորները ստեղծելու գլխաւոր պատճառը Հնդկաստանի պաշտպանութեան անհրաժեշտութիւնն է:

ՊԱՐԻՉ. Լրագիրները հաւանութեամբ են խօսում Բարձրագոյն մանիֆէստի մասին, որ նոր ապացոյց է Թագաւոր Կայսրի հոգաւոր-լութեան իր ժողովրդի մասին: «Gaulois» ա-սում է, որ մանիֆէստը չափազանց նշանաւոր դէպք է Ռուսաստանի սօցիալ-դեմոկրատիկ ղե-ծի մէջ, գիւղացիներին տուած թոյլաւո-թիւնը դուրս գալ համայնքից մի նորմալու-թիւն է, որը համարեա հաւասարադր է յե-ղաշրջման «Figaro» լրագրի խօսքով, մա-նիֆէստը ուղղակի հաւանութիւն է տալիս:

Պեւելի ձեռք առած միջոցներին «Eclair» ա-սում է, որ Թագաւոր Կայսրը, ոչնչացնելով նախկին ստիկանութեան վերջին հետքը, ներկա-յանում է Օգոստոսիան Պապի, Թագաւոր-Աղա-տարարի շարունակող:

ԼՈՆԴՈՆ. «Times» ասում է, որ մանիֆէստը սաստիկ կազդէ ժողովրդական մասսաների վրա և անկասկած դարաշրջան կը կազմէ ուս-ժողովրդի զարգացումը մէջ: Մանիֆէստի լե-զուն ցոյց է տալիս, որ Թագաւոր Կայսրը պարզօրէն գիտակցում է իր ձեռք առած միջոց-ների նշանաւոր բնաւորութիւնը: խոստացված բէֆօրմները ուս ազգաբնակչութեան ժողո-վրդական մասսաների մէջ առաջ կը բերեն ոչ միայն նոր սովորութիւններ, այլ և նոր գա-ղափարներ: Մի և նոյն ժամանակ Թագաւոր Կայսրը յայտնում է ինքնակալ կուսե արեւո-թեամբ պահպանել ուս պետական իշխանու-թեան յաղորդական հիւնքերը: Թագաւոր Կայ-սրի մեծանոցի մտքերից երևում է, որ Միա-պետը լուրջ ցանկութիւն ունի համարել հպա-տակներին թէ բարոյական և թէ տնտեսական դրութեան բարեօրման:

ԼՈՆԴՈՆ. Համայնքների ժողովը հաստատեց փետրվարի 20-ին (մարտի 5-ին) 9,647,000 ֆունտի կրէդիտ զօրքի համար համապատաս-խան զինուորում պատրաստելու նպատակով:

1 մարտի

ՊԵՏՏՐՈՒՐԳ. 74-դ տիրութի ժամանակ երկ-րորդ ներքին փոխառութեան խաղաղութեան տուսերի գլխաւոր գումարները տարան հետե-ւեալ տուսերը. 200,000 ռ.—11933/43, 75,000 ռ.—9096/3, 40,000 ռ.—15437/20, 25,000 ռ.—12090/40, 10,000 ռ.—478/15, 7993/38, 94/13, 8000 ռ.—19724

կադրողակցության ճանապարհների վարչության թանգարանը:

ՊԱՐԻՉ, Բարձրագույն մանկագիտության, որի բնականորեն տալիս է փրանսիական բոլոր լրագրողները առանց խտրության կուսակցության թիւներին, միաձայն համարում են մի պրոգրամ, որ ամենամեծ քաղաքական նշանակություն ունի ուսումնական ապագայի համար: Մեծ լրագրողները մանկագիտության վերաբերմամբ իրանց կոմունարականներն են անում, որոնց գլխավոր միտքը հետևանք է. «Figaro» գրում է. «այդ մանկագիտությունը ոչ միայն նոր ապագայ է այն զգացմունքների, որոնք, ինչպես յայտնի է, թագաւոր կայսրը տաժում է դէպի իր ամենահասակաւ հպատակները, այլ և ուղղակի Նորին կայսերական Մեծութեան հաւանութեան նշան է դէպի այն միջոցները, որ ձեռնարկել է ներքին գործերի միջոցները տարվայ ընթացքում: Մանկագիտությունը եղակի գործողություն է, նա հասուն կերպով պատրաստված էր, դրան կը հետևեն և ուրիշները:

ՄԱՐԻՐԻ, Արտասահմանում տարածված լուրը թագաւորի հիւանդութեան մասին ոչինչ հիմք չունի:

ԲԵՐԼԻՆ, Բերլինի նախնադաս գեներալ-ադյուտանտ ֆոն-Գանսլեյնը չորսված է գեներալ-ֆելդմարշալի աստիճան:

ԼՕՆԴՈՆ, Ֆէյրից հաղորդում են, որ զինուորական միջոցները սուլթանական զորքերի մեծ մասի հետ վերադարձաւ այնտեղ՝ մահմեդական մեծ տոնախմբութեան հանդէսներին ներկայ լինելու թեկնածուն դեռ էլի գտնվում է Տաղուս:

ՊԱՐԻՉ, «Journal des Débats» ասում է. «Թագաւոր կայսրը, որը արդէն խաղաղ կոնֆերանցիս հրաւիրելով, ցույց տուեց Նորին Մեծութեանը ոգևորող լայն և մեծածոյզ դադափաներ միջազգային յարաբերութիւնների շրջանում, առեց այդ դադափաների հաստատութեան նոր ապագայի իր պետութեան ներքին քաղաքականութեան վերաբերմամբ: Մենք կարող ենք ողջունել միայն մանկագիտությունը, որ պէս բաղդաւոր նշան բարեկամ և դաշնակից ազգի համար:

Խորագիր՝ ԱՆԻՍՏԱՆԻ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԿՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԻՆԻՔ-ԱՂԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒ

«ДВОРЦОВЫЕ НОМЕРА» ՀԻՐԱՆՈՑԻ նոր կապալառուն հասցնում է ի տեղեկութիւն ընթանողի, որ ներկայ 1903 թվականի յունվարի 20-ից «Дворцовые Номера» հրատարակող, որ գտնվում էր Բագու քաղաքում, Բագրիվանի այգու մօտ, նոր անձի ձեռք անցնելուց յետոյ, նա չքել կերպով վերանորոգված է, պահվում է օրինակելի կերպով և մաքուր, մայրաքաղաքի լաւագույն հրատարակչների նման ունի անպայման քաղաքական և պատուէրները չունակող կատարող ծառայողներ, եկուրների յարմարութեան համար կան տեղեֆոն և կոմիսիոներ: Հրատարակողը գտնվում է քաղաքի ամենալաւ մասում, համարեա բոլոր կարեւոր հիմնարկներին մօտիկ: Հրատարակողի մէջ կան 30 նստիչներ, նստիչների գինը՝ սկսած 60 կօպէկից մինչև 5 ռուբլի օրական, իսկ ամսով վարձելու համար՝ պէտք է առանձին համաձայնութիւն կայացնել հրատարակողի հետ: Հրատարակողը գտնվում է առաջնակարգ ընտանիք, մասնագէտ հրատարակողներ անձնական հսկողութեան տակ:

Գները ամենապարզապէս են:
2—4 Յարգանք՝ Ա. ՄՈՒԹԱՅԵԱՆ

ՀԱՐԱՐՈՑԻՆ ՊԱՐԻՉԱՅԵԱՆ

ՊԱՐՍԻՑ ԿՈՑԻ

ԶԷՏՈՒՆԵԱՆ ԸՆԳԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարեկի վրա)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծովի առեւտրի մասին, նախ ներկայացուցիչներ հարաւային Գարախանի հիւանդար կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում և վաճառում է ազգային, փոխադրում է Եւրոպայի Գարախանի և Գարախանից Եւրոպայի, զինվորական զայմաններով: Հասցէն. Zeytoon C. G. Buchier Persian-Gulf. 74—100

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՐՈՒՆ

Ուրբաթ, մարտի 7-ին

ԴԵՐԱՆՆԵՐ ԵՒ ՅՈՒԶԱՆԵՐՍԵԱՆ

Իր կազմ խմբով կը ներկայացնէ

ԱՒԱԶԱԿՆԵՐ

Ողբերգութիւն 5 գործ. 7 պատկ. հեղ. Շիլլերի թարգմ. Փ. Վարդանեանի

Փրանց Ֆոն-Մօօրի դերը կը կատարէ պ. Յովհաննիսեան

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան

Տեղերի գինը սովորական է: Տոմարները կարելի է ստանալ թատրոնի կասսայում:

1—2

ՄԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԱՒԱՐՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ընտիր ընկալիչացիաներով, փնտռում է պաշտօն—գաւազանի, (кассир), կառավարչի (управляющий), վերականգնող (надзиратель) և կամ հաշուապահի օգնականի: Հասցէն հարցնել «Գոլուտենբերգ» գրախճառանոցում:

1—3

Կովկասեան Դիւղատնտեսական Ընկերութեան շինութեան մէջ Մ. Ա. Խ. Վ. Ո. Ի. Մ. ԵՆ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Հալի-Իզմայիլ-օղլի տպագր. ինժեներներ, տանձներ, դեղներ, բալի և այլ ծառեր—երկու-երեք տարեկան:

1—2

Հ յ յ յ տ ե ս ա լ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՈՒ

ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԲՈՒԼ

Ֆէյրից երեք տարածումով

Դինն է 30 կօպ.

Դիմել Թիֆլիսի գրախճառներին կամ հեղինակին. Тифлисе, Чавчавадзеовская, Д. Маркварова № 25:

3—3

Հ Ո Յ Տ Ե Ս Ս Ա Ի

Ա. ԱՀԱՐԱՆԵԱՆ

Մ Ա Յ Բ Ե Ր Ը

(Գաղմուկածը)

Դինն է 15 կօպ.

Դիմել Գոլուտենբերգ գրախճառանոցին և եղինակին. Тифлисе, Редакция „Мурч“. 10—10

ԲԺԻԾԻ Ա. ՄԻՍԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանրամասն տեղեկութիւն, մորթու և վերերկրական այլ ունեցող հիւանդներին Բիմիկո-միկրոսկոպիկական կարգիւն, որ տեղ ընդունվում են կաթի, խորի, մէջի և արեան անալիզներ:

Առաւօտեան 11—1 ժ.

Երեկոյեան 4—6 ժ.

Բերումով կայա փողոց № 41. առն Արաբտեանի. Бебутовская ул. № 41. Домъ Арапотова. 63—150

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ

ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Ետնադրում է հիւանդների ընդունելութիւնը: Առաւօտեան ժամը 9—2

Երեկոյեան ժամը 5—7

(Կ. Կ.) 49—105

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ

Ա. Մ. ԽԱՆ-ԱՂԵԱՆ

Ընդունում է հիւանդներին 9—2 և 4—6 ժ. Երեկոյեան հրապարակ, առն Խարաբեանի № 3: (Կ. Կ.) 42—100

!! Օ Գ Տ Վ Ե Ց Ե Գ Ի Ե Պ Գ Ի Ց !!
Ե Ղ Բ. Վ. Ե Ի Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

որը գտնվում է Գոլուտենբերգ պրոսպեկտի վրա, 1 գիմնադրայի հանդէպ,
Ե Շ Ա Ն Ա Կ Վ Ա Ս Ե

ՄԻՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՀԱՐԱՐՈՒՄ

այն է փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ը

ԶԸ ՏԵՄԵՎԱԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄ

Անցեալ տարվայ ամառային և ձմեռվայ սեզոններից մնացած տղամարդկանց, կանանց և երեխայից հաղորդողներ, որոնք առանձնացրած են միտքներից և վերջնական դերը նշանակված էտիկետների վրա կապույտ մատիտով: Ստացել ենք արտասահմանեան և ուսանական ամենալայն գործարարներից, մեծ քանակութեամբ զանազան տեսակ արկիւներ և մանուկներ: Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ, ծախում ենք նաև արկիւնով: Ստացել ենք և շարունակ ստանում ենք եւրոպական ամենավերջին տարազով կարված տղամարդկանց և կանանց հագուստներ և վերնազգեստներ: Գների արժանութեան կողմից չունի ոչ մի մրցող:

8—10

Կարսի Հայոց Հոգեւոր Կառավարութեան Առեւտրային Երկրորդ անգամ նշանակված է առաջիկայ մարտի 3-ին, ցերեկվայ ժամը 12-ին Ա Ճ Ո Ւ Դ Ե Ի Ն Կ Ե Ա Ճ Ո Ւ Դ Ե Ի Ն կապույտով տպուկ Հայկական «Տայր» անունով 600 դեպքով հոգեւոր, որին մասնակցել ցանկացողները պայմանների մասին դիմելու են նորից Ետեմին:

5—10

Անգամ կառավարութեան Խորին քանակայ Ստամբուլում

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННЫЙ ЖУРНАЛЪ

НОВЫЙ МІРЪ

Въ 1903 году гг. подписчики получают:

24 №№ богато иллюстрированнаго журнала «НОВЫЙ МІРЪ»	52 №№ иллюстрирован. журнала «ЖИВОПИСНАЯ РОССИЯ»
24 №№ иллюстрированной текущей жизни «ВРЕМЕННИКЪ ЖИВОП. РОССИИ»	52 №№ газеты, п. н. «ВРЕМЕННИКЪ ЖИВОП. РОССИИ»
24 №№ иллюстрированной приключенческой жизни «МОЗАИКА»	12 книгъ ежемѣс. журн. «ЛИТЕРАТУРНЫЕ ВЕЩЕРА»

Кромѣ того, БЕСПЛАТНО ТРИ ЦѢННЫЕ ПРЕМИИ

- 1) РОСКОШНОЕ ХУДОЖЕСТВЕННОЕ ИЗДАНИЕ, являющееся первымъ и единственнымъ этого рода изд. въ Россіи: ГРАФЪ Л. Н. ТОЛСТОЙ въ портретахъ, гравюрахъ, медальяхъ, изображеніяхъ въ живописи, скульптурѣ и т. д., съ прилож. мыслей и изречен. великаго писателя.
- 2) РУССКІЙ МУЗЕЙ ИМПЕРАТОРА АЛЕКСАНДРА III Роскошное художественное изданіе въ больш. форматѣ, содержащее свыше 120 картинъ, съ объяснит. текстомъ Н. Корсакова.
- 3) 12 КНИГЪ ВЪ 12 ПЕРЕПЛЕТАХЪ БИБЛИОТЕКИ РУССК. И ИНОСТР. ПИСАТЕЛЕЙ заключающей въ себѣ 12 А собранія сочиненій, а именно: 6 томовъ собранія романовъ, 6 томовъ произведеній знаменитаго англійскаго писателя Д. И. СТАХЪБА и 6 томовъ произведеній знаменитаго англійскаго писателя С. М. СМАЙЛЬСА. Годовая подписная цѣна «НОВОГО МІРА» на вѣленой бумагѣ, со всѣми объявленными приложеніями и беспл. прем., съ дост. и перес. 14 р. Годов. подп. цѣна «НОВОГО МІРА» на слоеной бум. (вм. велен.) съ тѣми же прилож. и прем., съ дост. и перес. 18 р., за границу 28 р. РАЗСРОЧКА допускается при условіи уплаты при подпискѣ не менѣе 2 р. и ежемѣс. не менѣе 1 р. и съ тѣмъ, чтобы вся подписная сумма была уплачена полностью не позже 10 декабря 1903 года. Подписка на «Новый Міръ» принимается въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. ВОЛЬФЪ въ С.-Петербургѣ, Гостинный Дворъ, 18, и въ Москвѣ, Кузнецкій Мостъ, домъ Джамагеровыхъ, а также во всѣхъ прочіихъ столичныхъ и провинціальныхъ книжныхъ магазинахъ. Издатели: Товарищество М. О. ВОЛЬФЪ.—Редакторъ: П. М. ОЛЬХИНЪ.

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Գրիմո և ընկ զեղազորների թղթ է տրված Ռուսաստանում Այս հեղուկի մէջ շահագործված են պերուսկան Մատիկո ընդի յատկութիւնները, մի ընդի, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորելը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համար խորային հոգեւոր և ստացել ծարձ ժամանակում բուժում է ամենագործող սերմնաթափութիւնները:

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխավոր զեղազորներում

(2, 17)

5—24

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА XVI-й годъ изданія XVI-й

СВѢРЪ

Въ 1903 году гг. подписчики получают

24 КНИГИ СОБРАНИЙ СОЧИНЕНИЙ	Вс. С. Соловьева
-----------------------------	------------------

автора историч. роман. „Сергій Горбатовъ“, „Вольтерьянецъ“ и др. Въ каждой книгѣ есть 112 до 240 и болѣе страницъ, на газетр. бумагѣ

— Это собраніе сочиненій стоитъ 15 руб. —

52 №№ роскошно иллюстрированнаго журнала, въ которомъ будетъ печататься новый интересный романъ г. Е. А. Саміаса „Ловеласъ“; 52 №№ жевед. обо рѣнія политической и общественной жизни; 12 №№ журнала „Парижскія Моды, Хозяйство и Домоводство“, со множествомъ рисунковъ и полезныхъ указаній; 12 №№ выкроекъ на отдѣльныхъ большихъ листахъ.

Кромѣ всего этого, годовые подписчики получаютъ большую картину проф. Ю. Ю. КЛЕВЕРА „ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ“ Размѣръ картины, опечатанной масляными красками, 12X18 верш. Въ отдѣльной продажѣ цѣна этой картины 5 руб.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ безъ дост. въ СП.— 6 р., съ дост. и перес. 7 р., на 6 м.— 3 р. 50 к., на 3 м.— 1 р. 75 к., за границу— 11 р. РАЗСРОЧКА допускается по полугодіямъ и четвертямъ года. Подписки просить адресовать на имя редактора-издателя Ник. Фед. Мертца. (СПБ. Невскій, 170).

ГЛАВНАЯ КОНТОРА ЖУРНАЛА „СВѢРЪ“ СПБ. НЕВСКІЙ, 170.

8—21